

Արոտային շրջանում կյառու կռվերի կերակրումը

Արոտային շրջանում կյառու կռվերի կերակրումը

Լիարժեք կերակրման շնորհիվ կռվերից ստացված կաթի մեջ կարելի է բարձրացնել յուղի, սպիտակուցների և հանքային աղերի քանակը: Կռվերի կաթնատվությունը ավելանում է 1-ից մինչև 6-րդ ծիւրը, իսկ հետո սկսում է իջնել տարեկան 5-7 %-ով:

Արոտային շրջանում կյառու կռվերի կերակրման կերաբաժին				
կերատեսակի քանակը (կգ) 1 գլխի համար				
Կենդանու քաշը(կգ)	<i>արոտային կանաչ</i>	<i>գարի</i>	<i>ցորենի թեփ</i>	<i>Արմատա պալարապտուղներ</i>
350	ըստ պահանջի	1.5	1.5	3
400	ըստ պահանջի	2	1.5	4
450	ըստ պահանջի	2	2	4
500	ըստ պահանջի	2	2	4.5
550	ըստ պահանջի	2.5	2	4.5

Մսուրային շրջանում կյառու կռվերի կերակրում

Ճիշտ կերակրումը բարձրացնում է կյառու կռվերի կաթնատվությունը:

Մսուրային շրջանում կյառու կռվերի կերակրման կերաբաժին				
կենդանիների քաշը (կգ) կերատեսակների քանակը (կգ) 1 գլխի համար				
	<i>մարգագետնային խոտ</i>	<i>գարի</i>	<i>ցորենի թեփ</i>	<i>Արմատա պալարապտուղներ</i>
350	9	1.5	1.5	4
400	9.5	2	1.5	5

450	10	2	2	5
500	10.5	2	2	5.5
550	11	2.5	2	5.5

Կովերի ցամաքեցում

Առողջ հորթ ստանալու և կովի բարձր կաթնատվություն ապահովելու համար վերջինին ծնից առաջ անհրաժեշտ է ցամաքեցնել, այսինքն՝ դադարեցնել կիթը: Կովերի ցամաքի շրջանը տևում է միջինը 60 օր: Բարձրակիթ, երիտասարդ կամ թուլացած կովերի մոտ այն կարելի է հասցնել մինչև 75 օր:

Ցամաքեցնելուց առաջ անհրաժեշտ է համոզվել, որ կովը հղի է:

Ցածրակիթ կովերին (օրական մինչև 3 լիտր) միանգամից դադարեցնում են կթելը: Ավելի բարձրակիթ կովերին նախապատրաստում են ցամաքեցմանը՝ կրճատելով կթելու հաճախականությունը և կերաբաժնում պակասեցնելով հյութալի կերերի քանակը: Ցամաքեցումը համարվում է ավարտված, երբ կուրծը այլևս չի ուռչում և իր մեջ կաթ չի կուտակվում:

Արոտային շրջանում կովերի ցամաքեցումը ավելի դժվար է: Եթե կովը չի ցամաքում, ապա անհրաժեշտ է որոշ ժամանակ կերակրել միայն չոր խոտով, առհասարակ կերաբաժնից հանելով հյութալի կերերը և կրճատել ջրի քանակը: